ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
# ՀՐԱՄԱՆ

№ 5411-Ն

## ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Հաստատել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի տրամադրման վարչության ապաստանի հայցի քննման բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

19/09/2024

X

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN VAHE 2514740053

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի
2024 թվականի սեպտեմբրի «19 »-ի N 5411 -Ա հրամանի

**ԾՐԱԳԻՐ**

**Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի տրամադրման վարչության ապաստանի հայցի քննման բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների**

1. **Ներգրավման դեպքը և հիմնավորումները**

Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի տրամադրման վարչության ապաստանի հայցի քննման բաժնում աշխատանքների ծավալների ավելացմամբ պայմանավորված և աշխատակազմի ամբողջական չհամալրվածության բերումով անհրաժեշտություն է առաջացել ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան փորձագետ:

2. **Փորձագետին ներկայացվող պահանջները**

1) առնվազն բարձրագույն կրթություն.
2) հայերենի իմացություն.
3) Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ փաստաթղթավարության բնագավառում մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտի ստաժ:
4) համապատասխան ոլորտի իրավական ակտերի իմացություն և անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. **Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը**

Փորձագետը ներգրավվում է մինչև վեց ամիս ժամկետով:

4. **Աշխատանքների ակնկալվող արդյունքը**

1) իրականացնում է ապաստան ստանալու դիմումների վարույթը և դրանց վերաբերյալ որոշումների կայացման աշխատանքները.
2) իրականացնում է ապաստան հայցողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակության տրամադրման աշխատանքները.
3) իրականացնում է ապաստանի հայցի վերջնական մերժում ստացած անձանց տվյալները Ծառայության համապատասխան ստորաբաժանմանը փոխանցման աշխատանքներ՝ ՀՀ-ից նրանց արտաքսման գործընթացը կազմակերպելու նպատակով:

**5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները**

1) Փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակային կտրվածքով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը:
2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

**6. Աշխատանքների գնահատման չափանիշները**

1) ապաստան ստանալու դիմումների վարույթը և դրանց վերաբերյալ որոշումների կայացման աշխատանքների իրականացնում.
2) ապաստան հայցողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակության տրամադրման աշխատանքների իրականացնում.
3) ապաստանի հայցի վերջնական մերժում ստացած անձանց տվյալները Ծառայության համապատասխան ստորաբաժանմանը փոխանցման աշխատանքների իրականացնում՝ ՀՀ-ից նրանց արտաքսման գործընթացը կազմակերպելու նպատակով: